

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 26

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

24.10. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ
- Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բադոյան - մարզպետի տեղակալ
- Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերդյանը, Գ. Բաղդասարյանը, Ս. Դուբայանը, Ա. Ադիյանը, Վ. Դոխտյանը, Ս.Խեչումյանը, Հ. Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ `

1.Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների և առաջիկա միջոցառումների կազմակերպչական աշխատանքների մասին

/Ձեկ. Ն.Սարգսյան/

2. Աշխատանքային ներքին կանոնակարգի և ստորաբաժանումների արդյունավետ համագործակցության մասին

/Ա.Նալբանդյան/

3. Ձմռան նախապատրաստական աշխատանքներ /ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, ՊՓԲԸ-ներ, մարզպետարան, համայնքներ, ճանապարհ/

/Ա.Նալբանդյան/

4.Չինաստանի դեսպանի Լոռու մարզ կատարած այցի մասին

/Ա.Նալբանդյան/

5. ՀՀ Նախագահի այց

/Ա.Նալբանդյան/

6.Հասարակությանը զինվորական մասնագիտության նկատմամբ հետաքրքրության մակարդակի բարձրացման, ինչպես նաև սպայի հեղինակության բարձրացման հետ կապված աշխատանքներ տանելու մասին

/Ձեկ. Մ.Սայադյան/

7. ա/Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին

բ/ Համայնքներում բյուջեների կազմման և հնգամյա ծրագրերը արդյունավետ կազմելու մասին /գործընթացը թափանցիկ դարձնելու,հանրային լուսմներ կազմակերպելու և հասարակական կազմակերպություններին ներառելու

/Ձեկ. Հ.Պապոյան/

8.Անչափահասների կողմից կատարված իրավախախտումների և հաշվառման մասին տեղեկատվություն /3-րդ եռամսյակ

/Ձեկ. Ս.Խեչումյան/

9. Աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուների , պարարտանյութերի բաշխման և պարտքերի հավաքագրման աշխատանքների մասին

/Ձեկ.Գ.Հակոբյան/

10. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բադոյանին, Հ. Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝
ա/ Քննարկել և ներկայացնել առաջարկություններ Տեղական ինքնակառավարման մարմինների 20-ամյակի միջոցառումների անցկացման վերաբերյալ:

բ/ Անհատական աշխատանքներ տանել մարզի համայնքի ղեկավարների հետ համայնքների բյուջեների և 5-ամյա ծրագրերի կազմման ուղղությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի ազգաբնակչությանը, հասարակական և այլ կազմակերպություններին և, առավել թափանցիկ ու հրապարակային քննարկումներ իրականացնելու նպատակով, ըստ անհրաժեշտության, նաև հրավիրել փորձագետ և կազմակերպել հանրային լսումներ:

2. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա. Դարբինյանին, Տ. Բադոյանին, Հ. Թադևոսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել մարզպետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգի պահպանման և ստորաբաժանումների արդյունավետ համագործակցության ուղղությամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ն. Սարգսյանին՝

Քննարկել և ներկայացնել առաջարկություններ «Սոցիալական աշխատողի օրվա» միջոցառումների վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ա. Լամբարյանին՝

Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել և վերահսկողություն իրականացնել մարզի համայնքների, ՀՈԱԿ-ների և մարզային ենթակայության և ճանապարհաշինական կազմակերպությունների կողմից ձմռան նախապատրաստական աշխատանքների պատշաճ իրականացման ուղղությամբ, ինչպես նաև, ճանապարհների բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով, ձեռք բերել անհրաժեշտ նյութական միջոցներ և ապահովել համապատասխան ցեռուցում:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժնի պետ Ա. Խեչումյանին՝

Անչափահասների կողմից կատարված իրավախախտումները հնարավորինս բացառելու նպատակով՝ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզի համայնքների ղեկավարների, համապատասխան կազմակերպությունների և իրավապահ մարմինների հետ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՄԱՆՈՒՇԱՐՅԱՆ

Արձ. Ա.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/